# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Հ.Սմբատ ՍՊԸ-ն ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ -2025/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 26 | Սեղանի կմախքը և ոտքերը ամբողջությամբ պետք է լինեն մետաղական քառանկյուն խողովակներից (30 x 30 x 2.0 մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով, կմախքի արտաքին չափերը՝ 1000 x 800 x 830 մմ: Սեղանի կմախքին զոդման միջոցով ամրացվում են մետաղական ոտքերը, որոնց եզրերը պետք է խցանված լինեն 8 մմ հաստությամբ պլաստիկե խցաններով: Սեղանը երեսպատված է 40-50 մմ հաստությամբ բարձր ճնշման լամինատե (HPL) պլաստիկ, ջրակայուն սալիկով, որի աշխատանքային հարթության անկյունները պետք է կլորացվեն, եզրերը շրջափակվեն 2-3 մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Սեղանը ունի երկաթյա երկու շարահարթակ՝ առաջինը գետնից 200 մմ բարձրության վրա, իսկ երկրորդը 500 մմ, որոնք երեսպատված են 20 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ով: Լամինացված ՓՏՍ-ի աշխատանքային հարթության անկյունները պետք է կլորացվեն և եզրերը շրջափակվեն 1-2 մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Շարահարթակները ամրանում են(նստում են) շրջանաձև միացված մետաղական քառանկյուն խողովակներին (30 x 30 x 2.0 մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ: Սեղանի կմախքը և ոտքերը ամբողջությամբ պետք է լինի փոշեներկված արծաթափայլ գույնի ջրակայուն ներկով: Սեղանի երկու կողմերում պետք է լինեն երկուական մետաղական կախիչներ: Գույնը նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Հ.Սմբատ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ -2025/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 26 | |